ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.7/11878-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-532-13.03.2023-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 386-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Անժելիկա Խաչանյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության ավագ մասնագետ
Հեռ. 515656
Էլ փոստ՝ anjelika.khachanyan@gov.am

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-532-13.03.2023-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ օրենքի նախագիծ) առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 94-րդ հոդվածի վերնագրում «Բնության» բառից հետո լրացնել «և մշակույթի» բառերը, իսկ 1-ին մասում «հուշարձանի» բառից հետո լրացնել «, արգելոց-թանգարանի, հնագիտական պարկի, հուշարձանի պահպանության գոտու» բառերը: Նախագծով առաջարկվում է նաև խստացնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված տուգանքների չափերը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 94-րդ հոդվածով նախատեսված են «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվության միջոցներ, իսկ 95-րդ հոդվածով նախատեսված են «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված հուշարձանների պահպանության և օգտագործման մասին օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվության միջոցներ:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-38-Ն օրենքով «, արգելոց-թանգարանի, հնագիտական պարկի, հուշարձանի պահպանության գոտու» հասկացությունները ներառվել են «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի կարգավորման

առարկայում, ինչով պայմանավորված Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է հանել օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմը և պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման կանոնները խախտելը կարող է հանգեցնել անդառնալի վնասների, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 94-րդ և 95-րդ հոդվածներով նախատեսված գործող տուգանքների սահմանաչափերի փոքր լինելը չի նպաստում նման դեպքերի կանխարգելմանը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բացի առաջացնող պատասխանատվությունից, տուգանքների սահմանաչափերի բարձրացումը կարող է կանխարգելիչ գործիք լինել բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի և պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի անխաթար պահպանության համար, նախագծով առաջարկվող՝ տուգանքների չափերի բարձրացումը հիմնավորված է:

Միաժամանակ նախագծի 1-ին հոդվածում օրենսգրքին կատարած հղումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին, ըստ որի *«Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են* ***օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը,*** *եթե վերնագիրը չի ներառում այն: Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս նշվում է օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:»:*

Նախագծի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին, ըստ որի *«Օրենսդրական ակտի հոդվածները, մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հոդվածում ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով:* *Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ* ***հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:*** *Հոդվածում ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից բաժանվում են միջակետով:»:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 386- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-532-13.03.2023-ԳԿ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

06.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պ-532-13.03.2023-ԳԿ-011/0 **ՆԱԽԱԳԻԾ**

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 94-րդ հոդվածում

1. վերնագրում «Բնության» բառից հետո լրացնել «և մշակույթի» բառերը;
2. 1-ին մասում, «բնության հուշարձանի,» բառերից հետո լրացնել «արգելոց-թանգարանի, հնագիտական պարկի, հուշարձանի պահպանության գոտ ու» բառերը:
3. 1-ին մասում «ութսունապատիկի» բառը փոխարինել «հարյուր հիսն ապատիկի» բառով, իսկ «հարյուրհիսնապատիկի» բառը փոխարինել «երեքհարյուրապատիկի» բառով;
4. Լրացնել նոր՝ 2-րդ մաս՝

«2. Նույն խախտումը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երեքհարյուրհիսնապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 95-րդ հոդվածում

1. 1-ին պարբերությունում «հիսունապատիկից ութսունապատիկի» բառերը փոխարինել «հարյուրապատիկից հարյուրհիսնապատիկի» բառերով, իսկ «հարյուրհիսնապատիկից երկուհարյուրապատիկի» բառերը փոխարինել «երեքհարյուրապատիկից երեքհարյուրհիսնապատիկի» բառերով:
2. Լրացնել նոր՝ 2-րդ պարբերություն.

«Նույն խախտումը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ չորսհարյուրապատիկի չափով»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. **Կարգավորման ենթակա խնդիրը.**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) մշակվել է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության և օգտագործման նկատմամբ անհատական և հանրային պատասխանատվությունը բարձրացնելու, պահպանման կարգերի և ռեժիմների խախտումները նվազեցնելու անհրաժեշտությամբ:

2. **Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, օգտագործման և պաշտպանության ներկա իրավիճակը հեռու է բավարար լինելուց: Հուշարձանների նկատմամբ վերահսկողական գործուն մեխանիզմների բացակայության, կամ դրանց ոչ պատշաճ կիրառման պատճառով հաճախ են խախտվում հուշարձանների պահպանության ռեժիմները, օգտագործման պահանջներն ու սահմանված կարգերը: Խնդիրը ինչպես հանրային, այնպես էլ վարչական պատասխանատվության, այդ թվում՝ պատասխանատվության չափի բարձրացման տիրույթում է:

3. **Առաջարկվող կարգավորման բնույթը.**

Նախագծով առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 94-րդ և 95-րդ հոդվածներով սահմանված վարչական տույժերի չափը խստացնել, ինչպես նաև սահմանել համապատասխան կարգավորումներ այն դեպքերում, երբ նույն խախտումը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում:

Ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 94-րդ հոդվածում ներառվել են «արգելոց-թանգարան, հնագիտական պարկ, հուշարձանի պահպանության գոտի» հասկացությունները, որոնք բխում են «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի նոյեմբերի 11-ի օրենքից:

4. **Միջազգային փորձի ոաումնասիրություն.**

Ուսումնասիրվել է Պորտուգալիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Լեհաստանի, Խորվաթիայի, Ռուսաստանի և Վրաստանի փորձը: ԼԼրևմտաեվրոպական երկրներում հուշարձանների պահպանության ռեժիմների խախտումների համար վարչական տույժերը տատանվում են 500-ից 40 000 եվրոյի սահմաններում, իսկ Ռուսաստանի Ռաշնությունում առավելագույն տուգանքը Յմլն ռուբլի է: .

5. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք.**

Նախագիծը մշակման ընթացքում ներգրավվել են ՀՀ ճարտարապետների պալատը, վերականգնող ճարտարապետներ և իրավաբաններ:

ախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է նպաստել բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների նկատմամբ հանրային և վարչական պատասխանատվության բարձրացմանը: Վարչական տույժերի չափերի ավելացումը դիտարկում ենք հուշարձանների պաշտպանության և պահպանման, պատմական միջավայրի պահպանության և օգտագործման ընդհանուր համակակարգում որպես լրացուցիչ զսպիչ գործոն, որը օժտված է նաև պրեվենտիվ ֆունկցիայով:

7. Կապը ռազմավարական Փաստաթղթերի հետ.

Պատմության և մշակույթի հուշարձանների, մշակութային այլ արժեքների պահպանությունը և պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ հռչակվել է որպես պետության պատասխանատվություն: Հայաստանի Հանրապետությունը մշակութային ժառանգության պահպանության հանձնառություններ է ստանձնել նաև միջազգային մի շարք համաձայնագրերով:

ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրում մշակութային ժառանգության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների թվում են հայկական պատմամշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանության, ուսումնասիրության, օգտագործման և հանրայնացման շարունակականության ապահովումը, իրավական դաշտի կատարելագործումը, ինչն էլ ուղղված է սույն նախագիծը: